

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՋԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածոյի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև հայտնի լուսանկարիչ Կարապետ Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի անձնական հավաքածոն, որը բանասիրությանը հայտնի է Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանի կազմած ցուցակի միջոցով:

Խ. Քուչուկ-Հովհաննիսյանը իր «Старинные армянские надписи и старинные рукописи в пределах Юго-западной Руси и в Крыму» («Հայկական հնագույն արձանագրություններ և հնագույն ձեռագրեր հարավարևմտյան Ռուսաստանի սահմաններում և Ղրիմում») հոդվածում՝ «Коллекция старинных армянских рукописей К. Оханджаньяна в Кишиневе» («Կ. Հովհաննիսյանի հայերեն հնագույն ձեռագրերի հավաքածոն Քիշնևում») ենթախորագրի տակ անդրադառնալով Կ. Հովհաննիսյանի ձեռագրերին, 1—11 թվահամարների ներքո համառոտակի նկարագրում է 11 ձեռագիր, այդ թվում 6 «Աւետարան» (№№ 1—6), 1 «Խորհրդատետր» (№ 7), 1 «Յայսմաւուրք» (№ 8), 1 «Ճաշոց» (№ 9), 1 «Տօնացոյց» (№ 10) և 1 «Ժամագիրք» (№ 11):

Հիշատակված 11 ձեռագրերից 8-ը (№№ 1, 4—6, 8—11) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս կից տախտակը), իսկ մնացած 3-ի (№№ 2, 3, 7) հետագա ճակատագիրը առայժմ մեզ հայտնի չէ:

Բացակայող այդ ձեռագրերն են.

№ 2. «Աւետարան», մագաղաթ, 165 թերթ, երկսյուն, բոլորգիր, մեծություն՝ 17,5 սմ, ունի կիսախորաններ և լուսանցազարդեր. պակասում է Հովհաննու Ավետարանը, իսկ Ղուկասու Ավետարանը ավարտվում է ԺԱ 39-ով: Գրիչ և տեղ՝ անհայտ, ժամանակ՝ ԺԴ դար:

№ 3. «Աւետարան», թուղթ, 267 թերթ, երկսյուն, բոլորգիր, մեծություն 21 սմ, ունի 13 տերունական նկարներ, խորաններ, կիսախորաններ և լուսանցազարդեր: Սկզբից և վերջից ունի 2-ական թերթ մագաղաթյա պահպանակներ (բոլորագիծ երկաթագիր, մասն Ավետարանի), կազմը կաշեպատ տախտակ՝ մետաղյա շրջանակով և արծաթյա կոստղերով: Գրիչ և տեղ՝ անհայտ, ժամանակ՝ ԺԶ դար: Հիշատակագրության մեջ ասված է, որ այն պատկանել է ոմն Հռիփսիմեի:

№ 7. «Խորհրդատետր», թուղթ, 20 թերթ, գրված 1711 թվականին Թոխատում, Եղիա Մարսվանեցու ձեռքով:

Բացի Քուչուկ-Հովհաննիսյանի կողմից արձանագրված վերոհիշյալ 11 ձեռագրերից, ըստ երևույթին Կ. Հովհաննիսյանը ունեցել է նաև այլ ձեռագրեր, որոնք չեն ցուցակագրվել. դրանցից մեկն է Մատենադարանի № 6712 ձեռագիրը, որի 1բ էջում պահպանվել է հետևյալ մակագրությունը. «Կարապետ

---

[1] Древности Восточные. Труды Восточной Комиссии Императорского Московского Археологического Общества, том II, вып. III, Москва, 1903, стр. 33—75.

[2] Անդ, էջ 50—57:

Յովհաննեսեանց Ալէքսանդրապոլցի, 1884 թ.»: Այդ ձեռագիրը հետագա շարադրանքում պայմանականորեն կարտահայտենք [12] թվահամարով:

Այսպիսով, առայժմ մեզ հայտնի տվյալներով, Կ. Հովհաննիսյանի ունեցած ձեռագրերի քանակը հասնում է 12-ի[3], իսկ առկա ձեռագրերի քանակը՝ 9-ի (№№ 4661, 6283, 6712, 7072, 7498, 7568, 7879, 8124, 8571), որոնցից 4-ը (№№ 4661, 6283, 6712, 7072) Մատենադարան են մուտք գործել 1924—1936 թվականների ընթացքում, իսկ մնացած 5-ը (№№ 7498, 7568, 7879, 8124, 8571)՝ 1938 թվականին Գրական թանգարանի հավաքածոյի կազմում: Վերջիններս, ի միջի այլոց, 20-ական թվականներից եղել են «Հայ արվեստագետների միության» գրադարանում և Գրական թանգարանին են անցել միության լուծարքից հետո (16.11.1930):

Թե ում են պատկանել նշված ձեռագրերը նախքան Կ. Հովհաննիսյանի հավաքածոյի մեջ մտնելը, ոչինչ հայտնի չէ: Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել ձեռագրերից մի քանիսի վրա եղած մակագրություններից, դրանք դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից եղել են Կ. Հովհաննիսյանի սեփականությունը և Քիշնև են փոխադրված Ալեքսանդրապոլից: Ահա այդպիսի մակագրություններից մեկը. «Ի մատենադարանէ Կարապետի Յովհաննիսեանց, 1879 թ., Ալէքսանդրապոլ» (№ 7072, թերթ 44ա):

Ստորև տալիս ենք այդ ձեռագրերի հին և նոր թվահամարների տախտակը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Ձեռագրի հերթական համարը	Հայ մատենագրության միավորի համարը	Գրական թանգարան	Մատենադարան	
			Ասոն հավաքածու	Այլի
1	57	1168	—	7879
2	—	—	—	—
3	—	—	—	—
4	1	1167	—	8571
5	60	1169	—	8124
6	59	1170	—	7568
7	—	—	—	—
8	—	—	1663	6283
9	—	1172	—	7498
10	—	—	—	7072
11	—	—	—	4661
[12]	—	—	—	6712

[3] Հովհաննիսյանը 4 ձեռագիր էլ նվիրաբերել է Մոսկվայի Կայսերական Հնագիտական թանգարանին («Արձագանք», 1896, № 47), որոնք այժմ պահվում են Մոսկվայի Պատմության թանգարանում;